բեալ (գինով). բարօր՝ բարեաւ. ալուրնիւրօր՝ ալերբք, և այլն։

Երկրորդը կը գտնուի բառի մէջ ձայնաւորի կամ հնչական բաղաձայնի քով. օր. հովնայ՝ հովանալ (զովանալ). ժողովուրդ՝ ժողովուրդ. ամիսվանի՝ ամսկովանի. բոլորովին՝ բոլորովին. գովասանք՝ գովասանք. գովել՝ գովել. – հոլովեալ ձեւեր՝ գովի՝ կովու. սովօր՝ սովու, սովով, և այլն. – տեղափոխուած և գեղչուած ձեւեր. սրվել՝ սովորել. սրվուռդգ՝ սովորոյթք. խորվել՝ խորովել, և այլն։

Երրորդը կը գտնուի բառի մէջ խուլ բաղաձայնի քով. օրինակներն են հօֆցաւ՝ հովացաւ (զովացաւ). գինօֆցաւ՝ գինովցաւ։

7. Հին հայերէնի –ոյ երկբարբառը ինչպէս ուրիշ նոյնպէս և Սուչավացոց բարբառին մէջ կը վերածուի ռ։ Օրինակներն են. անբամաղոց՝ անդամալոյծ. անուշ՝ անոյշ. Ասդռանռ՝ Աստուծոյ. գռան՝ գոյն. իրգռան՝ երեկոյ. ունգռոզ՝ ընկոյզ. բռոյ՝ թոյլ. յռոս՝ լոյս. գաբռոդ՝ կապոյտ. հօրբռոր՝ հօրաքոյր. չրգռոր՝ ճկոյթ. սրվուռդգ՝ սովորոյթք. գռոզ՝ (ոզ)կոյզ. ռժ՝ ոյժ. վարաքռոր՝ վարագոյր. քռոր՝ քոյր։

8. Ուսումնական են հետեւեալ երկու բառերը՝ ուր ոյ=ռի. հռիխ՝ յոյս. չիրաքռոյռից կամ չիրաքռոյռիս՝ նրագալոյց։

9. Ոչ բառին սկիզբը կամ մէջը՝ բաղաձայնի քով, իսկ բառին վերջը առանձին՝ կը մնայ ռ, առանց բացառութեան. օր. աշուռք՝ աշուն. դրռտդ՝ գուստր. օխթանատռն՝ եօթանասուն. ռզռն՝ ութսուն. ռռացք՝ ուուէցք. շռն՝ շուն. հրգռ՝ երկու. մէգռ՝ մէջուռ. սքեռոր՝ սկեռուր. բռշռ՝ բուռ, հէրռ՝ հերու (անցեալ տարի). անատռն՝ անասուն (թռչուն նշանակութեամբ պահուած). բռիս՝ թուխ (գնչու նշանակութեամբ). նրռռն՝ իննսուն։

10. Ոչ ձայնաւորէ առաջ (հետեւաբար բառի մէջ) կը գտնուայ վ։ Օրինակներն են. աղվեռ՝ աղուէս. Ասվածՙ՝ Աստուած. գավել՝ կառուել. լվանայ՝ լուանալ. լեզվի՝ լեզուի. գանգրդվել՝ գանգատել (= ուրիշ). զրգվել՝ զգուել. բաղռեղ՝ պատուել. բաղվագան՝ պատուական. վեղրնրվա՝ ուտելուս. ասանց համեմատ նաեւ երեսվել՝ երես առնել. բանվոր՝ բանուոր, գործաւոր. լրվացվել՝ լուացուիլ. խասնրվել՝ խառնուիլ. գրնվել՝ կծուիլ. հիմիգվանՙ՝ հիմիկուան. թիրվագան՝ պիտուական. շանվել՝ նշանուիլ. շանվոք՝ նշանուօք։

11. Այս վ խուլ բաղաձայնի քով կորսնցնելով իր հնչականութիւնը՝ կը գտնայ ֆ։ Օրինակներն են՝ բրքֆել՝ թթուել. ռզֆնալ՝ թուել, կարծել. բօրֆել՝ թօթափել (թօթուել ձեւէն). քրֆել՝ քթուել. օնքֆի՝ աչխ. ընքուի (յանք–ուի). հինչֆանի՝ մինչեւ (ինչուան 'ի). ջանչֆոր՝ ճանաչուոր (հանչուոր)։

12. Ոչ Ջնջուած, աւելցած, ը–ի կամ օ–ի փոխուած է հետեւեալ բառերուն մէջ. դրրգել՝ ուղարկել. ցրցրնել՝ ցուցանել. ռզֆնալ՝ թուիլ. ռզրռխ՝ ուր. ջանչռռյռխ՝ ճնճղուկ կամ ճնճուռ. գլոխ՝ գլուխ։

13. Ջռռան բառը (ինչպէս նաեւ ի Պոլիս) կը հնչուի յռվան։

14. Ուլ վերջացող բայերուն ձեւափոխութեան վրայ տես քերականութեան բաժնին մէջ։

Օ

Օ ամէն դիրքի մէջ անփոփոխ կը մնայ. օր. օդար՝ օտար. օնք՝ յօնք. հօհար՝ հօրեղբայր. ամօր՝ ամօթ. օրդրդալ՝ յօրանչել։

ՀՐԱՉԵԱՑ Ց. ԱՃԱՌԵԱՆ

ՏԱՆՈՒՔ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

(Շար. տես էջ 526)

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՈՒՆԱԿ. ԼԻՍԻՊՈՍ

ԱՆՄԵՂՔ. ՆԱՀԱՊԵՏՔ ԵՒ ՆՇԱՆԱԿՈՐ ՄԱՐԴԻԿ

Թոր քունը գլխէս ցրրուեց փարատեց ուժգին որոտումՙ[1] մ՝, ու վեր ցատկեցի Բրոնի արթընցած մէկու մը նման։

---

1. Որոտումՙ. Ամանք կը համարին դժոխային շչուկ մը, հիլերու անհուն ժխորը, տ. 9։ Ամանք բնաւ նշանակութիւն չեն տար այս անցքին։ Իսկ այլք տասդ որոտումՙ մը կը կարծեն՝ որ տեղի ունեցեր է վերայիշեալ փայլակէն ետքը։ (Երգ. Գ. 134), և կը բացատրեն. «Դժոխքի գաշտը սարսափելի կերպով կը ցնցուի, կարմրագոյն փայլակ մը այն մթին օդը կ'ակօսէ, ֆերթողն զգայազուրկ կ'էյնայ, հրեշտակը կ'ելնէ, զանիկա իր բազկացը մէջ կ'առնէ, կը տանի

digitised by A.R.A.R.@

Եւ հանգչած աչքը չուրջը յածելով,
Ոտքի ելելով[2] նայեցայ ուշիւ
Գիտնալու համար թ՝ արդեօք ուր էի։
Եւ ինչ կը տեսնեմ. ինքզինքը գրտայ
Եդերքը հովտին ցաւոց անդունդին
Ուր անվերջ ողբոց հընչեն որոտմունք։
Էր այնքան խաւար, խոր ու միգապատ,
Որ որչափ աչերս յատակն յառէի
Հոս բընաւ բան մ՝ ալ չէի նըշմարեր։
«Արդ հոն վարն իջնենք, կոյր աշխարհին մէջ»,
Քերթողն ըսկըսաւ գունաթափ դէմքով,
«Ես քու առջեւէն, դուն ալ ետեւէս»։
Եւ ես տեսնելով զինքը գունաթափ,
Ըսի. «Ես ինչպէս գամ, երբ դուն վախնաս,
Դուն որ սովոր ես[3] վախը փարատել»։
Եւ նա ինձ. «Հոն վարն եղող այդ մարդոց
Վիշտերն իմ դէմքիս մէջ կը նըկարեն
Կարեկցութիւն[4] մը՝ որ վախէն կարծես։
Երթանք, զի երկայն ուղին մեզ դրդէ[5]»։
Այսպէս մըտաւ ինքն ու զիս ալ մըտուց
Անդունդը պատող պարուսակին մէջ։
Հոն ինչ որ կըրցայ լըսածէս[6] դատել,
Ողբ ու լաց չըկար, այլ լոկ հառաչանք
Որ անդունդին օդը դողացնէին։

Եւ առաջ կու գար տըղոց ու կանանց
Ու մարդոց ըստուար ու խիտ խումբերուն
Ադանց տանջանքի կըրած ցաւերէն։
Բարի վարժապետս ինձ. «Զե՞ս հարցըներ
Թէ ինչ հոգիներ են այդ տեսածներդ.
Առաջ չըգացած կ՝ուզեմ որ գիտնաս։
Անմեղ են անոնք. թ՝ արդիւնք ալ ունին,
Զի բաւեր, ինչու որ մկրըտութիւն
Զունեցան՝ որ քու հաւատքդ մասն[7] է։
Իսկ անոնք որ են Քրիստոսէ առաջ,
Զպաշտեցին զԱստուած ինչպէս որ պէտք էր[8],
Ես այլ այս վերջնոց դասակարգէն եմ։
Ուրիշ մեղք չունինք, լոկ այս թերութեանց
Համար կորսուած ենք, ու կը տանջըւինք
Ապրելով առանց յոյսի[9] փափաքով»։
Այս խօսքեր սաստիկ սիրտը ցաւցուցին.
Զի այն լիմպոսին մէջ առաքինի
Մարդիկներ տեսայ ակախ դիրքի մէջ։
Մէն կասկածի յաղթող հաւատքին
Վրան ապահով ըլլալու համար,
Ակըսայ. «Վարժապետ իմ, տէր իմ, ըսէ.
«Ելա՞ ակից մէկն, իր կամ ուրիշին
Ադդեամբք, որ փառքի ետքն հասած ըլլայ»։
Եւ նա քաջարկեալ[10] խօսքս իմանալով,

Ախերոնին միւս ափունքը և անդարձութիւն կ՝ըլլայ՝ որոտման շաչիւնէն դեռ նա չարթնցած»։ Սակայն Տանդէ հրեշտակի և ստոյգ որոտման վրայ վանկ մ՝ալ չըներ, և եթէ իրեն աչքը կրցաւ հանգստանալ, սակայն և այնպէս իր արթնութիւնը այնպէս երգաղութեամբ չեղաւ։

2. Ելլելով. ինկած էր. Գ. 136, և քնացած էր, տ. 4, այնչափ, որ կրցած էր իր աչքը վերստանալ տեսողական կարողութիւնը՝ որ կորսուած էր շառափայլ լուսոյն յանկարծակի փայլատակիւնէն։

3. Սովոր ես. զինքը քաջալերած էր անտառին մէջ, Ա. 91 և այլն. զառիվերին վրայ, երբոր կը տարակուսէր ճամբան շարունակելու, Բ, 43 և այլն. դժոխքին դրան մուտքին քով, Գ, 13 և այլն. Քարանին առջեւ. Գ, 127, և այլն, և այլն։

4. կարեկցութիւն. աւելի վարը՝ արդիւնած, հոս ոչ, վասն զի այս պարուսակին մէջ չարագործները չեն ընակիր։

5. Դրդէ. փութալու։

Տ. 25-45։ Լիմպոսին մէջ են, ուր չկան դրկան պատիժներ, այլ սոսկ ժխտական. զրկանք երանութենէ, որով հաւատքն և վիշտք առանց մարտիրոսութեան։ Մեռելոց ստուար և մեծ խումբեր առանց մկրտութեան, ոչ ուրիշ բանի համար աքսորուած երկնքէն, բայց որովհետեւ հաւատք չունէին։ Սուրբ Օգոստինոս. «Ձմեզ, ով Աստուած, քեզի համար ստեղծեցիր. և մինչեւ ի քեզ չհանգչի, անհանգիստ է մեր սիրտը»։ Հանդերձեալ աշխարհին մէջ այս երանութիւնը յաւիտենական է։

6. Լսածէս. վասն զի տեսնէն անկարելի էր, չափազանց մութ ըլլալով։

7. Մասն. parte, ուրիշներ կը կարդան porta դռան, և առաջ կը բերեն, որ մկրտութիւնը դռան խորհրդոց կոչուած է։ Բայց ոչ դռան հաւատոց։ Դարձեալ կ՝ըսեն, թէ քրիստոնէական հաւատքը այլ և այլ մասեր չունի, այլ այլ և այլ յօդուածներ։ Պոքաչչիոյ. «Հաւատոց յօդուածները տասներկու են, որոցմէ մին է մկրտութիւնը»։ Արդի քերթող մը հաւանական է որ դռան գրքը, ձեռագրաց և հին մեկնիչներուն նայելով. Տանդէ գրեց մասն։ Մանաւանդ թէ ոչ մի ձեռագիր չունի դռան, ինչպէս կը հաստատէ Մուր՝ Տանդէի հմուտ մեկնիչը։

8. Ինչպէս որ պէտք էր, չհաւատացին գալիք Մեսիային. Աբր. Լ. 24։ Հմմտ. Ս. Յովհ. ԺԳ. 6. Գործք Ա. Գ. 12։

9. Առանց յոյսի. ուրեմն իրենց վիճակն յաւիտենական է, երբէք յոյս չունին, երբ ալ ըլլայ՝ երանելեաց քովն երթալու։

10. Քաջարկեալ. վասն զի ուզած էր ակնարկել զՔրիստոս՝ առանց անունը տալու։

digitised by A.R.A.R.@

Պատասխանեց. «Նոր[11] էի եկեր հոս,
Երբ տեսայ Հզօր[12] մէկ մ'եկաւ մեզի,
Պսակուած յաղթութեան բոլոր նշանօք։
Առաջին ծնողին ըստուերը կորզեց,
Իր Աբէլ որդւոյն և նոյնպէս Նոյի,
Եւ օրէնսդիր հնազանդ[13] Մովսէսին.
Աբրամ նահապետն ու Դաւիթ արքան,
Իսրայէլն[14] իր հօր, որդւոց, Հռաքէլին
Հետ՝ որուն համար այնչափ քըրտնեցաւ[15]։
Եւ ուրիշ շատեր, զորս երանացուց.
Եւ կ'ուզեմ գիտնաս, անոնցմէ առաջ
Մարդկային հոգիք փըրկըւած չէին[16]»։
Թէպէտ կը խօսէր նա, բայց և այնպէս
Առաջ կ'երթայինք, կըտրելով անտառն,
Անտառը կ'ըսեմ բազմախուռն հոգւոց։
Դեռ մեր ճամբան չէր հեռու այն տեղէն
Ուր ինկայ քնացայ, երբ կրակ մը տեսայ
Որ կիսագունդին յաղթէր խաւարչուտ։
Քիչ մ' հեռու էինք դեռ, բայց ոչ այնչափ
Որ չըկըրնայի մասամբ նըշմարել
Թէ ի՛նչ պատուաւոր մարդիկ կային հոն.
«Ո՛վ որ կը պատուես գիտութիւն ու արուեստ,
Ո՞վ են այդ այնչափ պատուաւոր մարդիկ,
Որ ուրիշներէն կը զանազանուին»։
Եւ նա ինձ. «Անոնց պատուաւոր համբաւն
Որն որ թողուցեր են քու կեանքիդ մէջ[17]
Երկընքի այդ շնորհն իրենց կը ստանայ[18],
Եւ նոյն ժամանակ ձայն[19] մը լըսեցի.
«Հոյակապ քերթողն պատուեցէք, ահա
Իր մեկնած[20] ըստուերն առ մեզ կը դառնայ»։
Եւ երբ դադրեցաւ ձայնը խօսելէն,
Չորս մեծ ըստուերներ[21] սկըսան մեզի գալ,
Դէմքերնին չէր ո՛չ տըխուր[22], ո՛չ զըւարթ։
Բարի վարժապետս ըսկըսաւ ըսել.
«Նայէ՛ անոր որ սուր[23] մը ձեռքին մէջ,
Երեքէն առաջ կու գայ իբր իշխան.
Հոմերոսն է այն, գերագոյն քերթողն,
Միւսն Որատիոսն[24] է երգիծաբան,
Երրորդն Ովիդիոս[25], Լուկանոս[26] վերջինն։
Վասըն զի ամէն մէկն ինձ հաւասար է[27]
Այն անունով՝ որ միակ ձայնն հընչեց,
Կը մեծարեն զիս, և աղէկ[28] կ'ընեն»։

---

11. Նոր. յիսուն տարիէն աւելի էր որ հոն կը գտնուէր. մեռած ըլլալով 20 սեպտ. Քրիստոսէ 19 տարի առաջ։

12. Հզօր. Քրիստոս։ Չէր ճանչնար զինքը երբ դժոխք իջաւ, ուստի և անունը չի տար։ Եւ դարձեալ կը զգուշանայ Տանդէ Դժոխքին մէջ անոր անունը տալու։

13. Հնազանդ. Թէպէտ և օրէնսդիր իւր ազգին, սակայն հնազանդ Աստուծոյ, որով և կոչուեցաւ ծառայ Աստուծոյ. հմմտ. Յեսու. Ա, 1, 2, 7, և այլն։

14. Իսրայէլ. Յակոբ. — Հօր. Իսահակ։

15. Այնչափ քրտնեցաւ. ծառայեց անոր համար եօթը տարի. և յետոյ դարձեալ եօթը տարի։ Հմմտ. Ծննդոց ԻԹ, 18-20. 27. 30։

16. Փրկուած չէին. Արքայութիւն չէին մըտներ, վասն զի փակ էր, ըստ միջնադարեան աստուածաբանութեան, Ադամայ անկումէն մինչև Քրիստոսի մահը։ Հմմտ. Թով. Աք. Բով. Աս. Մասն Գ. խնդ. 69։

17. Կեանքիդ մէջ. կենդանեաց աշխարհին մէջ։

18. Կը ստանայ. Աստուածաբանները կ'ըսեն որ թէպէտև մէկը մահացու մեղաց մէջ ըլլայ, սակայն եթէ բարի գործ մ'ըրած է, թէպէտև դժոխք երթայ, բայց այն բարի գործին համար՝ անոր պատիժները կը մեղմանան։

19. Ձայն. ոչ ամենուն մէկէն, ապա թէ ոչ պէտք էր ըսել պատուեցէք, այլ խմբէն մէկուն ձայնը, որ միւս երեք քերթողներուն դառնալով կ'ըսէ. Վիրգիլիոսը կը դառնայ պատուեցէք զանիկայ։

20. Մեկնած. Տանդէին օգնելու համար. Դժ. Բ, 52 և այլն։

21. Ըստուերներ. այն քերթողներուն՝ որոնք Տանդէի համար վեհագոյն էին։ Նա Հոմերոսը անուամբ միայն կը ճանչէր, վասն զի յունարէն չէր գիտեր, և դեռ չէին թարգմանուած քերթուածները։ Որատիոս, Ովիդիոս և Լուկանոս իրեն ծանօթ էին։

22. Տխուր. վասն զի դրական ցաւեր չէին կրեր։ — Զուարթ. վասն զի երանելի չէին։

23. Սուր. զէնքերը երգելուն համար։ Յունական հարթ քանդակներու (bassorilievo) մէջ Իլիականը նկարուած է կնոջ դէմքով, ձեռքին մէջ սուր մը բռնելով։

24. Որատիոս. (Կուինտոս-Փլակկոս) հռչակաւոր լատին քերթող. ծնած Քրիստոսէ 68 տարի առաջ. ունի Գեղօններ, Երգիծաբանութիւններ, Թուղթեր և Արուեստ քերթողական, զոր թարգմանեց Բագրատունին։

25. Ովիդիոս. (Պուբլիոս-Նազոն), հոյակապ լատին քերթող, ծնած Քրիստոսէ 43 տարի առաջ, ունի Այլակերպութիւններ և ուրիշ գործեր։

26. Լուկանոս. (Մ. Աննէոս —) լատին քերթող. ծնած 39ին և մեռած Ներոնի ձեռքով 65ին (Քրիստոսէ ետք). գլխաւոր գործն է Փարսաղիա քերթուածը, որ տասը գրքերէ կը բաղկանայ, որոց մէջ գեղեցիկ կերպով կը նկարագրէ Կեսարու և Պոմպէի միջև եղած քաղաքական պատերազմները, թէպէտև ոչ միշտ ճշմարիտ։

27. Ինձ հաւասար է. անունով ամէնն ալ ինձ հաւասար են, ինծի պէս քերթող են։

28. Աղէկ. զիս պատուելով լաւ կ'ընեն, վասն

digitised by A.R.A.R.@

Այսպէս գեղեցիկ դըպրոցը խըմբուէր
 Այն իշխաններուն[29] ոյց վեհագոյն երգն՝
 Արծուոյ պէս այլոց վըրան սաւառնի։
Քիչ մը միասին խօսելէ[30] յետոյ,
 Բարեկամաբար ողջունեցին զիս,
 Որուն վրայ ժըպտաց իմին վարժապետս։
Զիս դեռ աւելի պատուեցին անոնք,
 Վասն զի ըրին զիս իրենց խըմբէն,
 Այն իմաստնոց մէջ վեցերորդն[31] եղայ։
Մինչեւ լոյսն[32] այսպէս գնացինք խօսելով
 Զորըս գեղեցիկ է լըռելն[33] հոս տեղ,
 Ինչպէս գեղեցիկ էր հոն տեղ խօսելն։
Ազնիւ դըղեկի մ' ըստորոտն հասանք,
 Շըրջապատուած եօթ բարձըր պարըսպօք,
 Զըքնաղ գետակով մ' ալ պատըսպարուած։
Ցամաք երկրի պէս վըրայէն անցանք,
 Այն իմաստնոց հետ մտայ եօթ դըռներէ[34],
 Ու դալարագեղ կանաչ մարգ մ' հասանք։

Մարդիկ կային հոն ծանր ու լուրջ աչքով,
 Դէմքերնին վըսեմ ու մեծվայելուչ,
 Քիչ կը խօսէին, քաղցրանուշ ձայնով։
Այսպէս մեկնելով խորշերէն մէկէն
 Բաց տեղ մը եկանք, լուսաւոր ու բարձր,
 Ուրկէ ամէնքն ալ կը տեսնըւէին։
Հոն կանաչագեղ մարգին վըրայ ճիշդ
 Ինծի ցուցուցին մեծ մեծ հոգիներն,
 Զորըս տեսնելուս վրայ դեռ կը հըրճուիմ։
Տեսայ Էլէկտրան[35] շատ ընկերներով,
 Որոնց մէջ ճանչցայ Հեկտորն, Էնիաս,
 Կեսարը՝ զինուած փայլուն աչքերով։
Տեսայ Կամիլլա[36] ու Պենթեսիլէ[37].
 Միւս կողմը տեսայ Լատինոս[38] արքան,
 Նըստած իր աղջկան Լաւինեայի[39] հետ։
Տեսայ Տարկուինը մերժող Բըրուտոսն[40],
 Լուկրետիան[41], Յուլիան[42], Մարկիան, (Կոռնելիան,
 Եւ Սալատինը[43] մինակ առանձին։

զի ամէնքնիս ալ քերթող ենք, և ինծի ըրած պատիւնին իրենց կ'երթայ։

29. **Այն իշխաններուն**. (Di quei signor) հինգ քերթողները. ձեռագիրներուն մեծամասնութիւնը և հինները բոլոր այսպէս կը կարդան. ուրիշներ կը կարդան (Di quel signor) այն իշխանին, և ոմն Հոմերոսը կը հասկընայ, ոմն Վիրգիլիոս։ Բայց Որատիոս և Ովիդիոս չէին վերաբերիր Հոմերոսի դպրոցին, և ոչ Հոմերոս՝ Վիրգիլիոսի դպրոցին։

30. **Խօսելէ**. չորսերը տեղեկութիւն ուզեցին Տանդէի վրայ, և Վիրգիլիոս տուաւ։

31. **Վեցերորդ**. մարգարէութիւն՝ որ կատարուեցաւ։

32. **Լոյս**. վերը յիշուած կրակին լոյսը։

33. **Լռել**. վասն զի խօսելով պիտի ստիպուէր ինքզինքը գովել։

Տ. 106–114. **Լիմպոսի դղեակը**։ Ստորոտը կը հասնին դղեակի մը, որ խորհրդապատկեր է մարդկային իմաստութեան, կամ զուցէ փառքի տաճարին։ Դղեակը շրջապատուած է եօթնապատիկ բարձր պարիսպներով, խորհրդանշանք եօթն առաքինութեանց, այսինքն է չորս բարոյական. զգաստութիւն, արդարութիւն, զօրութիւն և ժուժկալութիւն. և երեք հայեցողական. իմացականութիւն, գիտութիւն և իմաստութիւն։ Դարձեալ պատսպարուած է գեղեցիկ վտակով մը, հաւանօրէն խորհրդանշան ճարտասանութեան, որուն միջոցաւ եօթն առաքինութիւնները կը ստացուին և մարդիկ կը համոզուին, հմմտ. Դժ. Ա, 79, 80։ Անթաց ոտքերով կ'անցնին գետակէն, վասն զի մեծամեծ և ազնիւ հանճարներուն պէտք չեն ճարտասանական համոզումներ՝ վերը յիշուած առաքինութիւնները անոնց գործադրել տալու համար։ Եօթը դռներէ կը մտնէ, որք են եօթն ազատական արուեստները. քերականութիւն, տրամաբանութիւն, հռետորութիւն, երաժշտութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն և աստղաբաշխութիւն։ Կը հասնին դալարագեղ մարգագետին մը՝ ուր կը բնակին հնութեան մեծամեծ ոգիները։

34. **Եօթ դռներէ**. եօթը պարիսպներէն իւրաքանչիւրն իր դուռն ունէր։

Տ. 115–129. **Դիւցազնները**։ Վեց քերթողները կը մեկուսանան կողմէ մը, ուրկէ արգիլուած չէր նայիլը, և հոն կը ցուցուին Տանդէի մեծամեծ հոգիներն այն մարդոց՝ որոնք գործակցեցան հռոմէական կայսրութեան, ինչպէս նաեւ Սալատինը առանձին, հռոմէական կայսրութեան հետ գործ մը չունենալուն համար։

35. **Էլէկտրա**. դուստր Ատլասայ, մայր Դարդանոսի՝ որ հիմնադիր եղաւ Տրոյիոյ. հմմտ. Վիրգ. Էնիակ. Ը, 134, և այլն։ — **Ընկերներով**. տրովացիք, որ իրմէ սերած էին, յորս Հեկտոր և Էնիաս, մին պաշտպան հանդիսացաւ Տրոյիոյ, և միւսը Իտալիա փոխադրեց տէրութիւնը։ Սակայն Էնիասէն Կեսար կը ցատկէ։

36. **Կամիլլա**. հմմտ. Դժ. Ա, 107. Վիրգ. Էնիակ. ԺԱ։

37. **Պենթեսիլէ**. թագուհի Ամազոնաց, որուն յաղթեց Աքիլլէս. հմմտ. Վիրգ. Էնիակ. Ա, 481, և այլն։

38. **Լատինոս**. արքայ Լատիոնի, աներ Էնիասայ. Վիրգ. Էնիակ, Է, 45, և այլն. 268, և այլն. ԺԱ, 292, և այլն։

39. **Լաւինիա**. կին Էնիասայ. հմմտ. Վիրգ. Էնիակ. Զ, 764. Է. 72, և այլն։

40. **Բրուտոս**. Լուկիոս Յունիոս Բրուտոս,

digitised by A.R.A.R.@

Աչքըս քիչ մը վեր վերցնելով յետոյ,
Տեսայ վարժապետն[44] անոնց՝ որ նըստին
Իմաստասիրաց ընտանիքին մէջ․
Անոր կը նային ամէնքն յարգանօք․
Սոկրատը տեսայ հոն ու Պըղատոնն,
Որ ճիշդ անոր քովը[45] նըստած էին․
Երկիրս դիպուածէ կարծող Դիմոկրիտն[46],
Դիոգինէս[47], Թաղէս[48], Անաքսագորաս,
Զենոն[49], Եմպեդոկլ և Հերակլիտոս․
Տեսայ յատկութեանց ճարտար հաւաքողն՝
Դիոսկորիտէսն[50], Որփեւս[51], Տուլլիոս,
Եւ բարոյագէտ Սենեկն ու Լինոս․
Երկրաչափ Եւկլիտն[52] ու Պըտղոմէոս,
Հիպպոկրատ[53], Գաղիեն և Աւիկէննա,
Կորդուացին[54] որ մեծ մեկնութիւնն ըրաւ․
Զեմ կըրնար գրուցել բոլոր տեսածներս,
Վասըն զի երկայն նիւթըս զիս դըրդէ[55],
Եւ շատ հեղ խօսքերն իրին չեն հասնիր․
Վեց[56] հոգին երկու հոգւոյ վերածուի․
Մի ուրիշ ճամբով այն խաղաղ օդէն
Զիս սարսռունին[57] մէջ տանի առաջնորդս․
Կու գամ հոն ուր լոյս տըւող բան չըկայ[58]․

151

Շարայարելի Թրգմ․ Հ․ Ա․ ՂԱԶԻԿԵԱՆ

առաջին բդեաշխ, զոր պէտք չէ շփոթել Մարկոս Յունիոս Բրուտոսի, Կեսարու սպանչին հետ, որ վարը Արուսեկին բերնին մէջն է։ Դժ. ԼԴ. 63։ — Տարկուինոս Գոռոզը, վերջին թագաւոր Հռովմայ։

41. Լուկրետիա. տիկին հռովմայեցի նշանաւոր իր գեղեցկութեամբ և առաքինութեամբ, կին Լուկիոս Տարկուինոս Կոլլատինոսի։ Հրապուրուելով Քեստոս Տարկուինոսէն՝ որ էր որդի Տարկուինոս Գոռոզի, ինքզինքն սպաննեց հետեւեալ օրը՝ չդիմանալով անպատուութեան, նախ հօրը և ամուսնոյն պատմելով եղածը, և երդուընցընելով զանոնք որ իր վրէժն առնեն։ Անկից սկսաւ Տարկուինեանց հալածանքը և այս եղաւ սկիզբ Հռովմայ Հասարակապետութեան։

42. Յուլիա. դուստր Յուլիոս Կեսարու և կին Պոմպէի։ — Մարկիա. կին Կատոնի. Համմտ. Քաւ. Ա, 76։ — Կոռնելիա. դուստր Սկիպիոնի Ափրիկեցւոյն և մայր Գրակքոսեանց. Համմտ. Արք. ԺԵ, 129։

43. Սալատին. Սուլդան Եգիպտոսի և Ասորւոց. 1137–1195, անուանի քաջութեամբ և վեհանձնութեամբ։

Տ. 130–150։ Իմաստասէրները։ Աւելի հեռուն կը տեսնէ գիտունները, և կը թուէ նախ սեռական իմաստասէրները, բնագէտները, ճարտարախօսները և գեղագէտները։ Տանդէ և Վիրգիլ զատուելով միւս չորսէն ճամբանին կը շարունակեն։

44. Վարժապետ. Արիստոտէլ, «վարժապետ մարդկային բանին»։

45. Քովը. Արիստոտէլէն ետքը իրենք ըլլալով ամենէն անուանի իմաստասէրները։

46. Դիմոկրիտոս, աբդերացի, որ կը վարդապետէր թէ երկիրս կազմուած է հիւլէներու կոյր համախմբումէն։

47. Դիոգինէս. անուանի շնական իմաստասէր Սինոպեցի։

48. Թաղէս՝ Միլետացի. — Անաքսագորաս. հռչակաւոր ուսուցիչ Պերիկլեսի։

47. Զենոն. ստոյիկեան։ — Եմպեդոկլես. յոյն իմաստասէր։ — Հերակլիտոս՝ եփեսացի։

50. Դիոսկորիտես. յոյն բժիշկ՝ Կիլիկիոյ Անարզաբա քաղքէն. գրած է խոտերու և տնկոց յատկութեանց և ձեւերուն վրայ։

51. Որփեւս, կամ Որփէոս. անուանի երաժիշտ և քերթող յոյն։ Տուլլիոս. Կիկերոն. — Լինոս. հին յոյն բանաստեղծ համմտ. Վիրգ. Հովուերգ. Դ, 56. Զ, 67։

52. Եւկլիդես. նշանաւոր յոյն չափագէտ։ — Պտղոմէոս. անուանի աշխարհագէտ և աստղաբաշխ։

53. Հիպպոկրատ. յոյն բժիշկ։ — Գաղիենոս. բժիշկ Պերգամացի՝ ի փոքր Ասիա։ — Աւիկենա. արաբ բժիշկ։

54. Կորդուացին. արաբ իմաստասէր, նշանաւոր մեկնիչ Արիստոտելի. կը կոչուի Աւերրուա, կամ Աւէրրոէ, և անունն է Ապ՛իւլ-Վէլիտ Մուհամմէտ իպն Ահմէտ իպն Մոհամմէտ իպն Ռուշտ էլ-Մալիքի. ծնած է ի Կորդովա (Սպանիա), 1126ին և մեռած 1198ին։

55. Դրդէ. կը մորակէ առաջ երթալու։ Ըսելիք շատ բաներ ունիմ, բայց ամէնքը չեմ կրնար։

56. Վեց. Հոմերոս, Որատիոս, Ովիդիոս, Լուկանոս, Վիրգիլիոս և Տանդէ։

57. Սարսռուն. մրրկին պատճառաւ. Դժ. Ե, 29 և այլն։

58. Զկայ. ուր չկան գիտութեամբ և առաքինութեամբ փայլ ունեցող բնակիչներ, ոչ կրակ, ոչ աստղ, և ոչ ուրիշ լուսատու բան մը։

digitised by A.R.A.R.@